



# Մ ՈՒՐԲ ԶԱԿՈՐ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍ ՄԱՅՐ ԿԵՂԵՅԻ

ԿԱՐԱՐ ԿԻՐԱԿԻ  
21 ԱՊՐԻԼ 2024

## ԸՆԹԵՐՑՈՒՄ «ԱՌԱՔԵԱԼՆԵՐՈՒՆ ԳՈՐԾԵՐԸ» ԳԻՐՔԷՆ (13.16-43)

**Պ**օղոս ոտքի ելաւ, ձեռքով նշան ըրաւ որպէսզի լռեն, եւ ըսաւ.

«Ո՛վ իսրայէլացիներ եւ աստուածավախ մարդիկ, մտի՛կ ըրէք: Այս ժողովուրդին՝ Իսրայէլի Աստուածը ընտրեց մեր հայրերը, բազմացուց մեր ժողովուրդը որ Եգիպտոսի մէջ որպէս պանդուխտ կ'ապրէր, եւ իր մեծ զօրութեամբ զանոնք հոնկէ հանեց: Շուրջ քառասուն տարի անապատին մէջ կերակրեց զանոնք: Ապա Քանաան երկրի բնակիչ եօթը ազգերը պարտութեան մատնելով, անոնց երկիրը մեր ժողովուրդին տուաւ որպէս ժառանգութիւն: Այս բոլորը եղան մօտաւորապէս չորս հարիւր յիսուն տարիներու ընթացքին: Այնուհետեւ Դատաւորներ տուաւ անոնց, մինչեւ Սամուէլ մարգարէի ժամանակը, երբ մեր ժողովուրդը թագաւոր ուղեց, եւ Աստուած թագաւոր կարգեց Սաւուղը, Կիսի որդին որ Բենիամինի ցեղէն էր, քառասուն տարուան համար: Սաւուղէն ետք անոնց վրայ թագաւոր կարգեց Դաւիթը, որուն մասին նաեւ վկայեց, ըսելով.

“Դաւիթը, Յեսաէի Որդին, սրտիս խօսող անձն է, որ ամբողջութեամբ իմ կամքս պիտի կատարէ”:

«Անոր սերունդէն էր որ Աստուած Իսրայէլի տուաւ իր խոստացած Փրկիչը՝ Յիսուսը: Բայց նախքան անոր հրապարակ գալը, Յովհաննէս Իսրայէլի ամբողջ ժողովուրդին կը քարոզէր որ ապաշխարեն եւ մկրտուին: Եւ իր պաշտօնը լրացնելու ժամանակ, Յովհաննէս ըսաւ. “Ո՛վ կը կարծէք զիս: Ես ձեր սպասած անձը չեմ: Ահա ինձմէ վերջ կու գայ անիկա, որուն կօշիկները հանելու իսկ արժանի չեմ ես”:

«Եղբայրներ, Աբրահամեան տոհմի զաւակներ եւ ձեր մէջ գտնուող աստուածավախ մարդիկ. փրկութեան այս պատգամը Աստուած ձեզի՛ղրկեց: Որովհետեւ Երուսաղէմի բնակիչները եւ իրենց իշխանները չճանչցան Յիսուսը, եւ

զայն դատապարտելով՝ կատարած եղան խօսքը մարգարէներուն որ ամէն Շաբաթ կը կարդային: Եւ թէպէտ մահուան արժանի յանցանք մը չգտան անոր վրայ, սակայն պահանջեցին Պիղատոսէն որ սպաննուի: Երբ անոր մասին բոլոր գրուածները կատարած եղան, զայն խաչէն իջեցուցին եւ գերեզման դրին: Բայց Աստուած զայն մեռելներէն յարուցանեց, եւ Յիսուս բազմաթիւ օրեր երեւցաւ անոնց՝ որոնք իրեն հետ Գալիլիայէն Երուսաղէմ եկած էին, եւ որոնք հիմա իր վկաներն են ժողովուրդին առջեւ: Մենք ալ, ահա, ձեզի կ'աւետենք, թէ Աստուած մեր հայրերուն տուած իր խոստումը կատարեց մեր օրերուն, որ անոնց որդիներն ենք: Այդ խոստումը կատարեց՝ Յիսուսը յարուցանելով, ինչպէս երկրորդ Սաղմոսին մէջ ալ գրուած է.

“Իմ որդիս ես դուն, այսօր քեզ ծնայ”:

Նոյն այն իրողութիւնը, որ Աստուած զայն մեռելներէն յարուցանեց եւ անիկա այլեւս բնաւ մահ պիտի չտեսնէ, խոստում մըն է՝ մեզի ուղղուած, որովհետեւ Աստուած այսպէս կ'ըսէ.

“Ձեզի պիտի տամ այն իսկակաւն օրհնութիւնը որ Դաւիթի խոստացայ”, եւ ինչպէս ուրիշ Սաղմոսի մը մէջ սաղմոսագիրը կ'ըսէ. “Պիտի չթողուս որ բու ծառայիդ մարմինը փտութիւն տեսնէ”:

«Արդ, Դաւիթ իր սերունդին մէջ Աստուծոյ ծառայելէ ետք մեռաւ եւ իր հայրերուն քով թաղուեցաւ, եւ իր մարմինը փտեցաւ: Բայց Աստուած յարուցանեց Յիսուսը, որուն մարմինը փտութիւն չտեսաւ: Ուստի իմացէ՛ք, եղբայրներ, Յիսուսի միջոցաւ մեզքերու թողութիւն կը քարոզուի ձեզի: Ո՛վ որ անոր կը հաւատայ՝ կ'արդարանայ իր բոլոր մեղքերէն, որոնցմէ չկրցաք արդարանալ Մովսէսի Օրէնքին միջոցաւ: Զգո՛յ՜ եղէք ուրեմն որ ձեր վրայ չգայ այն ինչ որ մարգարէները կ'ըսեն.

“Տեսէ՛ք, ո՛վ արհամարհողներ, զարմացէ՛ք եւ կորսուեցէ՛ք. որովհետեւ ձեր օրերուն այնպիսի գործ մը պիտի ընեմ, որուն պիտի չհաւատաք, նոյնիսկ երբ մէկը պատմէ ձեզի”»:

Երբ Բառնաբաս ու Պողոս ժողովարանէն դուրս ելան, մարդիկ կ'աղաչէին որ միւս Շաբաթ եւս նոյն նիւթին մասին խօսին: Ժողովուրդին ցրուելէն ետք, բազմաթիւ հրեաներ եւ հրէութեան դարձած բարեպաշտ օտարազգիներ հետեւեցան Պողոսի եւ Բառնաբասի, որոնք անոնց հետ խօսեցան եւ համոզեցին զանոնք որ շարունակեն Աստուծոյ շնորհքին մէջ մնալ:

ԸՆԹԵՐՑՈՒՄ  
ՊԵՏՐՈՍ ԱՌԱՔԵԱԼԻ  
ԸՆԴՀԱՆՐԱԿԱՆ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԷՆ  
(5.1-14)

**Ե**րէցնե՛ր, որպէս երիցակից մը որ ձեզի պէս վկայ եմ Քրիստոսի չարչարանքներուն եւ ձեզի հետ ալ մասնակից պիտի ըլլամ գալիք փառքին որ պիտի յայտնուի, կ'աղաչեմ ձեզի. ձեզի վստահուած Աստուծոյ հօտը արածեցէք ո՛չ թէ իբր պարտադրանք կատարելով վերակացութեան ձեր պաշտօնը, այլ կամաւորաբար, ինչպէս Աստուած կ'ուզէ: Ո՛չ թէ դրամի սիրոյն, այլ յօժարութեամբ: Ո՛չ թէ ձեզի վստահուած մարդոց ձեր անձերը պարտադրելով, այլ օրինակ ըլլալով ձեր հօտին. որպէսզի երբ Հովուապետը յայտնուի՝ անթառամ փառքի պսակը ընդունիք:

Նոյնպէս ալ դուք, երիտասարդնե՛ր, հնազա՛նդ եղէք ձերերուն: Բոլորդ ալ խոնարհաբար ծառայեցէք իրարու, որովհետեւ ինչպէս Առակաց Գիրքը կ'ըսէ.

«Աստուած հակառակ է ամբարտաւաններուն, մինչ խոնարհներուն շնորհք կու տայ»:

Հետեւաբար Աստուծոյ հօր ձեռքին տակ խոնարհեցէք, որպէսզի երբ յարմար ժամանակը գայ՝ ձեզ բարձրացնէ: Զեր բոլոր հոգերը Աստուծոյ ձգեցէք, որովհետեւ ի՛նքը կը հոգայ ձեր մասին:

Արթուն եւ պատրաստ եղէք, որովհետեւ ձեր թշնամին՝ Սատանան առիւծի պէս մոնչելով կը շրջի եւ կլլելու համար մէկը կը փնտռէ: Հաստատուն հաւատքով դէմ դրէք անոր, գիտնալով որ աշխարհի մէջ բոլոր ձեր եղբայրներն ալ նոյն չարչարանքներէն կ'անցնին: Եւ բոլոր շնորհքներու պարգեւիչը՝ Աստուած, որ Քրիստոս Յիսուսի միջոցաւ իր յաւիտենական փառքին կանչեց ձեզ, նկատի ունենալով որ չափով մը մասնակից եղաք Յիսուսի չարչարանքներուն, պիտի ձեզ կազդուրէ, զօրացնէ եւ ամուր հիմերու վրայ հաստատէ ձեզ: Յաւիտեան ի՛րն են իշխանութիւնն ու փառքը: Ամէն:

Այս հակիրճ նամակը ձեզի գրեցի Սիղուանոսի ձեռքով – որ ըստ իս մեր հաւատարիմ եղբայրներէն

է – որպէսզի քաջալերեմ ձեզ եւ վստահեցնեմ թէ Քրիստոսի չարչարակից ըլլալը Աստուծմէ տրուած իսկական շնորհք մըն է, որ դուք կը վայելէք ապահովաբար: Այստեղ, Բաբելոնի մէջ գտնուող եկեղեցին, որ ձեր ընտրելակիցն է, կ'ողջունէ ձեզ: Նոյնպէս բարեւներ Մարկոսէն, իմ որդիէս: Սիրոյ համբոյրով ողջունեցէք զիրար: Խաղաղութի՛ւն ձեր բոլորին որ Քրիստոս Յիսուսի միացած էք: Ամէն:

ՅԻՍՈՒՍ ՔՐԻՍՏՈՍԻ ԱԻԵՏԱՐԱՆԷՆ  
ԸՍՏ ՅՈՎՀԱՆՆԷՍԻ  
(5.19-30)

**Յ**իսուս անոնց ըսաւ. «Հաստատ գիտցէք, թէ մարդու Որդին ինք իրմէ ոչինչ կը կատարէ, այլ կը կատարէ միայն այն՝ ինչ որ կը տեսնէ թէ Հայրը կը կատարէ: Որովհետեւ ինչ որ Հայրը կը գործէ, Որդին ալ նոյնը կը գործէ: Հայրը կը սիրէ Որդին եւ անոր ցոյց կու տայ ինչ որ ինք կը կատարէ: Տակաւին ձեր տեսածներէն աւելի սքանչելի գործեր ալ ցոյց պիտի տայ Որդին, այնպէս որ դուք պիտի զարմանաք: Ինչպէս որ Հայրը մեռելները կը յարուցանէ եւ կեանք կու տայ անոնց, նոյնպէս ալ Որդին կեանք կու տայ անոնց՝ որոնց ինք կ'ուզէ: Եւ Հայրը ոեւէ մէկը չի դատեր, այլ դատելու իշխանութիւնը ամբողջութեամբ յանձնած է իր Որդիին, որպէսզի բոլորն ալ պատուեն Որդին, ինչպէս որ Հայրը կը պատուեն: Ան որ չի պատուեր Որդին, չի պատուեր Հայրը որ գայն զրկած է:

«Հաստատ գիտցէք, ան որ իմ խօսքերս կը լսէ եւ կը հաւատայ անոր որ զիս զրկեց, յաւիտենական կեանք ունի եւ պիտի չզատապարտուի, որովհետեւ արդէն իսկ մահէն կեանքի անցած է: Վստահ եղէք, ժամանակ կու գայ – եւ արդէն իսկ եկած է – երբ մեռելները Աստուծոյ Որդիին ձայնը պիտի լսեն եւ լսողները պիտի ապրին: Որովհետեւ, ինչպէս որ Հայրը կեանք պարգեւելու զօրութիւնը ունի իր մէջ, այդ զօրութիւնը տուած է նաեւ Որդիին: Նոյնպէս ալ դատելու իշխանութիւնը տուաւ Որդիին, որովհետեւ անիկա մարդու Որդին է: Ուրեմն մի՛ զարմանաք որ ըսի, թէ ահա կու գայ ժամանակը, երբ բոլոր անոնք որոնք գերեզմաններու մէջ են՝ պիտի լսեն անոր ձայնը եւ դուրս գան. անոնք որ բարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ ապրին, իսկ անոնք որ չարիք գործած են՝ յարութիւն պիտի առնեն եւ դատապարտուին: Ես ինձմէ չէ որ կը դատեմ, այլ կը դատեմ այնպէս ինչպէս Հօրմէս կը լսեմ. եւ ուրեմն իմ դատաստանս արդար է, որովհետեւ կը գործադրեմ ո՛չ թէ իմ կամքս, այլ կամքը անոր՝ որ զիս զրկեց»: